



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. առաջին կիսամյակում / վերլուծություն /

2013թ. առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 87699 գործարքներ, որոնց քանակը, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 6.8%-ով, իսկ 2012թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 10.2%-ով :

2013թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 22017 օտարման գործարքների 74.7%-ը կազմել են առուվաճառքները, 24.9%-ը՝ նվիրատվությունները և 0.4%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.4%-ն արձանագրվել է

Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.2%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2013թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 15.0%-ով, իսկ 2012թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 4.3%-ով: 2013թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 6451 առուվաճառքի գործարքների 59.8%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. առաջին կիսամյակում, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.9%-ով, իսկ 2012թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 5.1%-ով:

2013թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին կիսամյակ 2012թ.	առաջին կիսամյակ 2013թ.	երկրորդ կիսամյակ 2012թ.
Կենտրոն	405300	426000	418500
Արաբկիր	336400	353700	346200
Քանաքեռ-Զեյթուն	263100	281250	274700
Նոր-Նորք	226800	248000	237800
Ավան	236200	257200	246900
Էրեբունի	234800	246900	240700
Շենգավիթ	232100	252550	243800
Դավթաշեն	257400	272150	266200
Աջափնյակ	224100	244800	234500
Մալաթիա-Սեբաստիա	222600	237500	231500
Նուբարաշեն	140100	149000	142000
<b>Միջինը Երևանում /բացի Նորք- Մարաշից/</b>	<b>252600</b>	<b>269900</b>	<b>262100</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. առաջին կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել են 6.8%-ով, իսկ 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 3.0%-ով:

2013թ. առաջին կիսամյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2032 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 16.6%-ով, իսկ 2012թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 7.5%-ով:

2013թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2012թ.	առաջին կիսամյակ 2013թ.	երկրորդ կիսամյակ 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	109900	114500	113400
	Ապարան	48700	55500	50700

	Թալին	61200	63300	61200
Արարատ	Արտաշատ	91300	94650	93300
	Մասիս	107200	113900	110700
	Վեդի	96400	98900	97600
	Արարատ	72200	75100	74200
Արմավիր	Վաղարշապատ	150400	153800	153200
	Արմավիր	116500	120500	118700
	Մեծամոր	85700	87200	86400
Գեղարքունիք	Սևան	97000	99100	99000
	Գավառ	52400	58900	54900
	Մարտունի	103500	107600	106800
	Վարդենիս	33300	43400	38900
	Ճամբարակ	21400	27200	23800
Լոռի	Վանաձոր	84500	88100	87100
	Ստեփանավան	74300	74500	74300
	Սպիտակ	100000	99800	99800
	Ալավերդի	49900	54800	52300
	Տաշիր	41300	45850	43600
	Թումանյան	11300	11000	11000
	Շամլուղ	8100	8000	8000
	Ախթալա	19500	19900	19700
Կոտայք	Արուսյան	150500	154100	153100
	Նոր Հաճն	128000	128500	128400
	Բյուրեղավան	106900	107800	107100
	Եղվարդ	108300	109300	109000
	Հրազդան	58100	63400	60500
	Ծաղկաձոր	294100	292500	292500
	Չարենցավան	82900	85200	84000
Շիրակ	Գյումրի	105400	109300	109000
	Արթիկ	63900	66300	64700
	Մարալիկ	35600	40100	37700
Սյունիք	Գորիս	115100	119550	115600
	Կապան	88700	91500	90200
	Սիսիան	79200	90225	85000
	Մեղրի	66500	78575	71600
	Ագարակ	40100	45400	43700
	Քաջարան	97100	94300	94200
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	82700	93700	88000
	Եղեգնաձոր	118700	121500	117900
	Ջերմուկ	96500	111400	105500
Տավուշ	Դիլիջան	100600	111200	106400
	Իջևան	111200	117600	115000
	Բերդ	49200	59000	53800
	Նոյեմբերյան	40700	48000	43500
	Այրում	24500	30400	26000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել են 5.3%-ով, իսկ 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 2.6%-ով:

2013թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2274 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 594, մարզերում միասին վերցրած՝ 1680: 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների

առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 14.6%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 24.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 10.5%-ով: 2013թ. առաջին կիսամյակում, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 1.5%-ով, ընդ որում, Երևան քաղաքում է 7.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 0.7%-ով:

2013թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին կիսամյակ 2012թ.	առաջին կիսամյակ 2013թ.	երկրորդ կիսամյակ 2012թ.
Կենտրոն	460100	474400	467100
Արաբկիր	366500	381300	373900
Քանաքեռ Զեյթուն	276400	293600	285100
Նորք Մարաշ	302900	317600	310800
Ավան	253500	269400	263800
Էրեբունի	223300	238200	231300
Շենգավիթ	241200	253700	248200
Դավթաշեն	259600	274700	266800
Աջափնյակ	237000	248400	241600
Մալաթիա Սեբաստիա	222600	236800	231200
Նուբարաշեն	144600	149400	145300
<b>Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)</b>	<b>271600</b>	<b>285200</b>	<b>278600</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. առաջին կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել են 5.0%-ով, իսկ 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 2.4%-ով:

2013թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

1Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2012թ.	առաջին կիսամյակ 2013թ.	երկրորդ կիսամյակ 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	131000	135900	134500
	Ապարան	52100	59550	55200
	Թալին	69300	68900	68600
Արարատ	Արտաշատ	98900	99550	98500
	Մասիս	111400	114750	112700
	Վեդի	99900	101850	100400
	Արարատ	87600	87950	87300
Արմավիր	Վաղարշապատ	148000	152800	152200
	Արմավիր	101600	106800	105500
	Սևան	91500	94600	94200

Գեղարքունիք	Գավառ	48500	57000	53400
	Մարտունի	90600	95600	93900
	Վարդենիս	34000	40300	35500
	Ճամբարակ	26000	30500	27000
Լոռի	Վանաձոր	95600	99700	98200
	Ստեփանավան	87100	89600	87800
	Սպիտակ	111900	113900	113500
	Ալավերդի	44300	49100	47300
	Տաշիր	50600	51900	50900
	Թումանյան	12300	12000	12000
	Շամլուղ	13200	13700	13200
	Ախթալա	29400	29900	29500
Կոտայք	Արսիկ	147700	155800	154500
	Նոր Հաճն	128500	129800	129800
	Բյուրեղավան	120000	120300	120000
	Եղվարդ	115000	116100	115800
	Հրազդան	77600	82500	80000
	Ծաղկաձոր	304100	305000	305000
	Զարենցավան	77900	82800	82400
Շիրակ	Գյումրի	116100	118300	117500
	Արթիկ	60500	63100	61900
	Մարալիկ	48000	51900	49800
Սյունիք	Գորիս	126900	129700	127300
	Կապան	97900	99500	98300
	Սիսիան	88200	95250	90500
	Մեղրի	74600	82800	78400
	Ագարակ	46000	46900	46300
	Դաստակերտ	11600	11600	11600
Վայոց Ձոր	Վայք	82200	89500	87400
	Եղեգնաձոր	110500	116600	114100
	Զերմուկ	119300	130500	123600
Տավուշ	Դիլիջան	104000	112000	109100
	Իջևան	119900	122550	121700
	Բերդ	57800	59500	58400
	Նոյեմբերյան	45900	47400	46100
	Այրում	34400	35450	34500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել են 4.1%-ով, իսկ 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել է 1.9%-ով:

Ընդհանուր առմամբ, 2013թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարվել են 7332 միավոր /3342.89 հա/ հողեր, որից Երևանում՝ 771 միավոր /46.58 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3806 միավոր /3048.64 հա/, որից Երևանում՝ 26 միավոր /5.42 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 2431 միավոր /200.34 հա/, որից Երևանում՝ 453 միավոր /17.53 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 939 միավոր /60.84 հա/, որից Երևանում՝ 277 միավոր /21.40 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 89 միավոր /15.83 հա/, որից Երևանում՝ 15 միավոր /2.23 հա/,

- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 30 միավոր /14.44 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 29 միավոր /2.47 հա/,
- ջրային հողեր՝ 8 միավոր /0.33 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 6007 միավորի /2618.55 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 659 միավոր /37.32 հա/, նվիրատվության գործարքներ՝ 1287 միավոր /719.60 հա/, որից Երևանում՝ 97 միավոր /7.59 հա/ և փոխանակության գործարքներ՝ 38 միավոր /4.74 հա/, որից Երևանում՝ 15 միավոր /1.68 հա/:

Հանրապետությունում 2013թ. առաջին կիսամյակում, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.9%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 2.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 6.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 1.2%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 596.50 հա, որից 568.99 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 28.5%-ը կամ 1710 գործարքներ /601.86 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 399 միավոր /14.75 հա/, իսկ 70.3%-ը կամ 4225 միավորը /1996.68 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 257 միավոր /22.56 հա/:

2013թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 72 գործարք /20.01 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2013թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	0	0.00	5	0.44	218	3.90	176	10.41	19	3.46	10	1.78	159	9.73	69	7.59
Արագածոտն	279	186.16	1	0.10	18	0.61	93	6.12	431	279.59	1	0.07	125	13.27	14	1.34
Արարատ	54	70.98	3	0.05	14	0.95	44	1.01	379	255.97	10	2.33	230	19.73	33	0.71
Արմավիր	30	74.36	4	0.38	11	0.46	25	0.42	497	494.63	2	0.02	247	25.44	20	0.74
Գեղարքունիք	14	41.45	2	0.13	94	7.55	35	2.32	159	125.02	2	0.13	116	14.46	8	1.17
Լոռի	1	0.07	8	1.30	27	0.84	52	0.71	124	74.12	4	1.59	45	5.11	13	0.17
Կոտայք	74	95.64	3	0.31	80	4.10	59	2.36	462	241.11	6	1.67	337	28.12	43	5.01
Շիրակ	4	2.29	2	0.22	27	0.89	26	0.93	159	143.55	2	0.44	72	8.41	9	0.42
Սյունիք	11	39.59	6	0.98	7	0.06	21	0.81	107	97.16	2	0.02	22	2.30	12	0.85
Վայոց ձոր	21	19.80	5	0.48	16	1.14	16	0.29	49	74.47	0	0.00	48	5.00	6	0.16
Տավուշ	7	5.54	5	1.33	39	2.91	33	5.29	74	30.48	0	0.00	60	5.57	17	4.69
Ընդամենը	495	535.88	44	5.72	551	23.41	580	30.67	2460	1819.56	39	8.05	1461	137.14	244	22.85

Ստորև ներկայացվում է 2013թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային

նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ օբյեկտներ ի հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանա- կության հողերի		Գյուղ. նշանա- կության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակա կան կառու ցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակա կան կառու ցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	314	6.58	4	0.24	194	2.12	116	4.22	85	8.17	0	0.00	1	0.20	24	1.78	60	6.19
Արագածոտն	84	5.15	1	0.10	13	0.26	70	4.79	65	110.99	37	109.30	0	0.00	5	0.36	23	1.33
Արարատ	11	0.26	0	0.00	4	0.15	7	0.11	101	71.780	51	70.03	3	0.05	10	0.80	37	0.90
Արմավիր	12	0.26	0	0.00	5	0.15	7	0.11	56	74.45	28	73.44	4	0.38	6	0.32	18	0.31
Գեղարքունիք	21	1.35	0	0.00	20	1.22	1	0.13	123	49.58	13	40.92	2	0.13	74	6.33	34	2.20
Լոռի	26	0.90	2	0.72	9	0.05	15	0.13	62	2.03	1	0.07	6	0.58	18	0.80	37	0.58
Կոտայք	14	0.69	1	0.10	8	0.51	5	0.08	198	101.28	70	95.20	2	0.21	72	3.59	54	2.28
Շիրակ	23	0.44	0	0.00	11	0.14	12	0.30	36	3.89	4	2.29	2	0.22	16	0.75	14	0.63
Սյունիք	4	0.89	2	0.86	2	0.03	0	0.00	41	40.55	11	39.59	4	0.12	5	0.03	21	0.81
Վայոց Ձոր	5	0.043	0	0.00	1	0.003	4	0.04	53	21.67	21	19.80	5	0.48	15	1.14	12	0.25
Տավուշ	5	0.28	0	0.00	3	0.08	2	0.20	79	14.8	7	5.54	5	1.33	36	2.83	31	5.10
Ընդամենը	519	16.84	10	2.02	270	4.71	239	10.11	899	499.19	243	456.18	34	3.70	281	18.73	341	20.58

Հանրապետությունում 2013թ. առաջին կիսամյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 252 գործարքներ /79.69 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. առաջին կիսամյակում, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 23.1%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 2.6 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 16.9%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 14.1%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 3.8%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 71.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. առաջին կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	22	79.31	54.0	1105.8	243.6	217	103.60	365.0	12000.0	3597.4
Ապարան	3	1.43	137.5	2982.9	1166.8	38	23.56	86.5	2727.3	727.8
Թալին	10	25.30	37.7	640.0	103.4	120	68.19	93.6	5494.5	658.1
Ծաղկահովիտ	2	3.26	193.2	381.4	287.3	31	67.66	79.5	1000.0	271.4
<b>Արարատի մարզ</b>										

Արտաշատ	10	14.60	81.0	5555.6	3285.2	181	55.38	335.1	10833.3	2832.8
Մասիս	27	34.17	47.3	2104.0	732.0	92	75.39	200.0	11904.8	3137.1
Վեդի	14	21.27	60.6	4495.2	570.3	96	120.82	207.0	10795.1	1848.9
Արմավիրի մարզ										
Արմավիր	17	55.31	60.4	1059.2	278.2	257	165.90	294.3	9090.0	1393.5
Բաղրամյան	3	3.41	70.9	70.9	70.9	82	234.25	90.6	2561.1	779.8
Վաղարշապատ	8	14.72	73.5	1244.3	665.3	127	56.02	444.4	11764.7	2346.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	4	9.95	117.6	635.5	374.6	37	12.57	199.8	1875.0	417.3
Ճամբարակ	1	0.27	180.6	180.6	180.6	64	40.21	60.5	953.3	352.4
Մարտունի						13	2.23	51.1	2850.0	737.5
Սևան	8	30.70	117.9	1221.0	763.7	1	0.43	52.2	2134.8	318.5
Վարդենիս						41	65.77	41.2	2575.1	413.1
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.07	490.1	490.1	490.1	16	9.23	170.4	6424.2	603.7
Գուգարք						33	7.63	234.6	6065.9	758.4
Սպիտակ						10	2.99	250.0	5555.5	731.3
Ստեփանավան						20	21.70	90.6	1686.6	318.0
Տաշիր						34	15.97	45.3	1384.4	154.2
Կոտայքի մարզ										
Արվյան	28	38.98	168.4	3086.7	553.0	175	84.78	279.3	11942.7	4455.0
Եղվարդ	33	32.46	75.8	2121.2	444.5	186	99.91	174.4	11971.8	2629.1
Հրազդան	9	23.77	147.5	1335.4	863.8	95	44.49	130.5	10256.4	1687.5
Շիրակի մարզ										
Ախուրյան						45	35.66	252.0	1693.1	617.5
Ամասիա						9	24.53	40.9	261.0	128.0
Անի						44	47.74	110.6	546.9	381.6
Աշոցք	3	1.44	66.6	238.9	124.5	15	9.82	58.5	215.8	126.5
Արթիկ	1	0.84	420.0	420.0	420.0	46	25.81	79.4	1428.6	410.4
Սյունիքի մարզ										
Գորիս	4	2.50	149.9	150.1	150.0	29	17.86	92.6	1023.2	721.5
Կապան	7	37.09	137.5	621.0	373.4	13	6.91	120.0	841.6	352.9
Մեղրի						15	2.43	193.0	3000.0	729.9
Սիսիան						49	69.78	46.3	1977.4	537.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	9	4.88	39.4	633.7	190.6	31	62.10	125.0	10000.0	1907.5
Վայք	12	14.92	64.1	8505.0	966.5	17	12.05	58.8	1430.7	627.9
Տավուշի մարզ										
Բերդ						28	8.08	213.3	3783.8	681.2
Իջևան	2	2.45	154.0	473.1	313.6	14	8.08	267.5	9454.5	1242.2
Նոյեմբերյան	5	3.09	151.7	1039.5	325.9	32	14.32	46.7	7368.4	871.2

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. առաջին կիսամյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների			Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների		
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/



			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	2	1110.0	2625.0	3183.4	2904.2	100	88588.0	130.7	22200.0	2573.3
Ապարան	1	508.0	176.9	176.9	176.9	8	9827.0	124.1	609.6	384.6
Թալին	2	1937.0	213.2	213.2	213.2	10	16984.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ						7	17298.8	60.0	214.3	87.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	6	6084.8	145.0	849.7	405.6	67	65599.2	173.9	7140.3	893.7
Մասիս	2	1336.8	891.1	3693.8	2292.4	105	71054.0	187.5	25000.0	1206.7
Վեդի	2	608.3	840.9	1614.6	1227.8	57	59522.4	126.1	5000.0	660.7
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						92	108567.5	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան	1	1200.0	233.1	233.1	233.1	6	8482.0	100.0	833.3	238.3
Վաղարշապատ	5	1989.9	523.8	3828.0	2092.8	143	132374.3	197.4	26528.4	1526.3
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	22	25202.8	113.2	895.0	182.1	27	28742.7	186.6	1084.3	665.9
Ճամբարակ	2	2077.0	106.6	108.7	107.7	3	7859.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	45	33658.8	113.5	410.7	272.1	69	77897.9	119.3	5000.0	279.5
Սևան	3	1674.0	714.2	1802.1	1226.0	4	5721.5	240.0	3110.4	307.8
Վարդենիս	2	732.7	66.6	600.0	333.3	12	22365.2	72.5	987.2	150.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	2	156.0	1100.0	1100.0	1100.0	2	856.0	114.3	1388.9	216.3
Գուգարք	10	1363.8	2009.7	4976.6	2943.3	21	21436.0	77.9	14083.3	1125.9
Սպիտակ	5	6133.6	230.5	256.2	243.6	15	19068.0	104.9	1348.3	205.3
Ստեփանավան	1	300.0	554.4	554.4	554.4	4	5312.0	88.2	1666.7	175.5
Տաշիր						3	4434.8	45.3	400.0	90.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	51	20157.7	407.5	5854.1	2775.7	160	131949.4	264.5	35353.5	1969.1
Եղվարդ	19	14555.0	1261.5	5471.4	2949.3	146	120282.9	173.6	27000.0	2852.5
Հրազդան	2	1180.0	1272.0	1411.1	1341.6	30	28192.0	117.7	34848.5	1320.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	7	2243.1	554.4	4882.0	2639.8	31	32726.4	113.6	18750.0	332.0
Ամասիա	1	416.0	165.4	165.4	165.4			45.3	274.7	71.0
Անի	4	3200.0	133.2	404.6	254.5	12	17779.9	67.9	180.6	161.1
Աշոցք						1	5050.0	40.8	144.0	63.2
Արթիկ	4	1594.1	289.7	2114.3	904.7	28	28571.3	111.8	5000.0	216.5
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						5	5607.0	112.2	1700.0	367.7
Կապան	5	328.1	1147.9	2900.0	1567.0	5	2485.0	67.9	2638.9	300.0
Մեղրի						8	4734.4	68.5	632.9	199.1
Սիսիան						4	10150.0	123.5	875.0	199.5
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	8	6830.0	64.8	1496.4	422.1	39	36091.3	96.7	7659.6	500.4
Վայք	7	4544.2	850.6	1312.5	964.0	8	12326.0	120.7	1448.3	203.0
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ	2	2435.0	45.0	1583.3	814.2	4	2223.0	75.8	810.0	111.3
Իջևան	31	23845.1	233.1	3000.0	2428.6	49	44144.6	74.1	14423.1	516.5
Նոյեմբերյան	3	2004.7	317.2	1100.2	644.8	6	8006.3	125.0	1948.1	222.8

2013թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4228 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.8%-ը:

2013թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 11.4%-ով, իսկ 2012թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 4.0%-ով:

2013թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 306 բնակարանների, 451 անհատական բնակելի տների, 1885 հասարակական և 468 արտադրական նշանակության օբյեկտների, 1013 միավոր /9334.80 հա/ հողերի, 8 այգետնակների և 97 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 100 վարձակալության գործարքների, այդ թվում 72 միավոր /0.57 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 2.4 անգամ, իսկ 2012թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել՝ 39.0%-ով:

2013թ. առաջին կիսամյակում հանրապետությունում վարձակալված 9334.80 հա հողերից 4.21 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 9330.58 հա հողերի 1020.22 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 41.76 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 4747.70 հա, որից 4738.57 հա՝ գյուղատնտեսական նշանակության: 2013թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում վարձակալվել են 7997.25 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2013թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 10455 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.9%: 2013թ. առաջին կիսամյակում գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 13.0%-ով, իսկ 2012թ. առաջին համեմատ աճել՝ 3.1%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /49.9%/, առանձնատների /24.5%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.4%/ և հողերի /7.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5550 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 12.0%-ով, իսկ 2012թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 3.3%-ով:

2013թ. առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 808 գործարքներ, որից 550՝ Երևանում: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 16.6%-ով, ընդ որում Երևանում՝ 13.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 23.2%-ով: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2012թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 49.9%-ով, ընդ որում Երևանում՝ 68.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 21.1%-ով:

2013թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 1159.70 հա մակերեսով հողեր, որից 93.14 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 85.7% կամ 994.22 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.80 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 366.00 հա, որից 363.07 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 10549 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 21.1%-ով, իսկ 2012թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 27.0%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /31.7%/:

## **« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**